ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ № 5

ՀՀ ՏԿԵՆ կարիքների համար կազմակերպված «ՏԿԵՆ-ՀԲՄԱՇՁԲ-2024/1Ս» ծածկագրով հրատապ բաց մրցույթ գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

Գնահատող հանձնաժողովի նիստը տեղի ունեցավ 16.10.2025թ.
ժամը 16:00

Գնահատող հանձնաժողովի կազմը՝

Հանձնաժողովի նախագահ՝

ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության իրավաբանական վարչության պետ (հանձնաժողովի նախագահ՝ ԳՊ/ԳԱՊ	Արամ Խաչատրյան

Հանձնաժողովի անդամներ՝

«Ճանապարհային դեպարտամենտ» հիմնադրամի ճանապարհների պահպանման և շահագործման բաժնի ճանապարհների պահպանման և շահագործման տարածքային ինժեներ (հանձնաժողովի անդամ՝ ԳՊ/ԳԱ)	Կարապետ Հյուսիսյան
«Ճանապարհային դեպարտամենտ» հիմնադրամի ճանապարհների պահպանման և շահագործման բաժնի ճանապարհների պահպանման և շահագործման վերահսկման ինժեներ (հանձնաժողովի անդամ՝ ԳՊ/ԳԱ)	Հրաչյա Բաղդասարյան
«Ճանապարհային դեպարտամենտ» հիմնադրամի ճանապարհների պահպանման և շահագործման բաժնի ճանապարհների պահպանման և շահագործման տարածքային ինժեներ (հանձնաժողովի անդամ՝ ԳՊ/ԲԱ)	Մովսես Ավագյան
«Ճանապարհային դեպարտամենտ» հիմնադրամի ճանապարհների պահպանման և շահագործման բաժնի ճանապարհների պահպանման և շահագործման տարածքային ինժեներ (հանձնաժողովի անդամ՝ ԳՊ/ԲԱ)	Թադևոս Կիլիչյան

Հանձնաժողովի քարտուղար՝

Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության գնումների համակարգման և կազմատնտեսական վարչության գնումների համակարգման բաժնի պետ (հանձնաժողովի քարտուղար՝ ԳՊ/ՄՀՄ)	Զանուշ Հայրապետյան

Օրակարգ
«ՏԿԵՆ-ՀԲՄԱՇՁԲ-2024/1Ս» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի որոշումը վերանայելու մասին

1. Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 27-րդ կետի 1-ին ենթակետով, 3-րդ ենթակետի բ) պարբերության պահանջներով և հիմք ընդունելով «ՏԿԵՆ-ՀԲՄԱՇՁԲ-2024/1Ս» ծածկագրով գնման ընթացակարգի (այսուհետ՝ Ընթացակարգ) գնահատող հանձնաժողովի քարտուղար Զ. Հայրապետյանի 09.10.2025թ. զեկուցագիրը՝ ՀՀ Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության գլխավոր քարտուղարի 09.10.2025թ. N2409-Ա և 15.10.2025թ. N2463-Ա հրամանները՝ գնահատող հանձնաժողովը 16.10.2025 թվականին՝ ժամը 16:00–ին, վերսկսեց իր աշխատանքները:

Նիստի ընթացքում գնահատող հանձնաժողովն ուսումնասիրեց «ՏԿԵՆ-ՀԲՄԱՇՁԲ-2024/1Ս» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի որոշումը վերանայելու մասին ՀՀ ՏԿԵՆ իրավաբանական վարչության կողմից տրամադրված եզրակացությունը, որը ներկայացվում է ստորև.

««Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքով սահմանվում են իրավական ակտերի միջև հակասությունների դեպքում կոլիզիաների լուծման կանոնները:

Մասնավորապես, նշված օրենքի 40-րդ հոդվածի համաձայն՝ նորմատիվ իրավական ակտերի նորմերի միջև կոլիզիաների դեպքում, ըստ հերթականության, կիրառվում են հետևյալ կանոնները, ընդ որում, յուրաքանչյուր հաջորդ կանոնը կիրառվում է, եթե կիրառելի չէ նախորդ կանոնը՝

1) ավելի բարձր իրավաբանական ուժ ունեցող նորմատիվ իրավական ակտի նորմը.

2) ընդհանուր նորմի և հատուկ նորմի միջև կոլիզիաների դեպքում գործում է հատուկ նորմը, սակայն եթե նորմատիվ իրավական ակտն ունի ընդհանուր և հատուկ մասեր, ապա այդ մասերի նորմերի միջև կոլիզիայի դեպքում գործում են ընդհանուր մասի նորմերը.

3) ավելի ուշ ուժի մեջ մտած նորմատիվ իրավական ակտի նորմերը.

4) ֆիզիկական և իրավաբանական անձանց համար բարենպաստ նորմատիվ իրավական ակտի նորմը, եթե այդ նորմի կիրառմամբ չեն շոշափվում այլ անձանց իրավունքները կամ օրինական շահերը:

Սույն պարագայում ՀՀ կառավարության 2010 թվականի նոյեմբերի 4-ի թիվ 1419-Ն որոշմամբ հաստատված «ՀՀ ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային ճանապարհների ընթացիկ ամառային և ընթացիկ ձմեռային պահպանման մակարդակների գնահատման ու կատարված աշխատանքների ընդունման կարգը և ՀՀ կառավարության 2017թ. մայիսի 4-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգը հանդիսանում են հավասարազոր ենթաօրենսդրական ակտեր, ուստի Օրենքի 40-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին ենթակետը կիրառելի չէ:

Հաջորդ կանոնի՝ Օրենքի 40-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ ենթակետի կիրառման արդյունքում գալիս ենք այն եզրահանգման, որ ՀՀ կառավարության 2010 թվականի նոյեմբերի 4-ի թիվ 1419-Ն որոշմամբ հաստատված «ՀՀ ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային ճանապարհների ընթացիկ ամառային և ընթացիկ ձմեռային պահպանման մակարդակների գնահատման ու կատարված աշխատանքների ընդունման կարգը հանդիսանում է հատուկ նորմ և պետք է գործի դրա պահանջները:

Հրավերով վերոնշյալ ձևերի ներկայացման պահանջը սահմանվել է հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2010 թվականի նոյեմբերի 4-ի N 1419-Ն որոշմամբ հաստատված «ՀՀ ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային ճանապարհների ընթացիկ պահպանման ամառային և ընթացիկ ամառային և ընթացիկ ձմեռային պահպանման մակարդակների գնահատման ու կատարված աշխատանքների մասին» կարգի 50-րդ, 51-րդ և 52-րդ կետերով սահմանված պահանջները:

Միաժամանակ անհրաժեշտ է նշել, որ ՀՀ կառավարության 2010 թվականի նոյեմբերի 4-ի N 1419-Ն որոշմամբ հաստատված Կարգի 52-րդ ենթակետը սահմանում է, որ գնային առաջարկների գնահատումը կատարվում է մրցույթի մասնակիցների կողմից լրացված և ներկայացված Ձև թիվ 11-ի հանրագումարների համեմատությամբ:

ՏԿԵՆ-ՀԲՄԱՇՁԲ-2024/1Ս» ծածկագրով հրատապ բաց մրցույթի գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի թիվ 2 արձանագրության 3.1 կետով Հանձնաժողովի կողմից արձանագրված անհամապատասխանությունը տեղ է գտել գնային առաջարկի ինքնարժեքի հաշվարկում, ուստի շտկման հնարավորություն տալը ՀՀ կառավարության 2017թ. մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 40-րդ կետի 4-րդ ենթակետի համատեքստում իրավաչափ չէ:»:

Գնահատող հանձնաժողովը որոշեց.

1) Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 01.03.2024թ. թիվ 2 նիստի արձանագրության 3.1-ին, 4-րդ և 5-րդ կետերով, 29.08.2025թ. թիվ 2.1 արտահերթ նիստում գնահատող հանձնաժողովի կողմից կայացված և արձանագրված որոշումները չեղյալ համարել:

2) Ղեկավարվելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 40-րդ կետի 4-րդ ենթակետի պահանջներով, համաձայն

որի Հանձնաժողովը մերժում է այն հայտերը, որոնցում բացակայում է գնային առաջարկը և (կամ) հայտի ապահովումը, կամ եթե դրանք ներկայացված են հրավերի պահանջներին անհամապատասխան և հիմք ընդունելով արձանագրված անհամապատասխանությունները, **«ՍՊԱՆԴԱՐՅԱՆ ԱՍՖԱԼՏ» ՍՊԸ և «ԵՎՐՈԲՈՒԴ ՊԼՅՈՒՍ» ՍՊԸ կողմից ներկայացված հայտերը գնահատել անբավարար և մերժել:**

3) Ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի (**հայտերից ոչ մեկը չի համապատասխանում հրավերի պայմաններին)** պահանջներով՝ Ընթացակարգը հայտարարել չկայացած:

4) Հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 3-րդ մասը՝ անգործության ժամկետ սահմանել 10 օրացուցային օր:

5) Հաստատել Ընթացակարգը չկայացած հայտարարելու մասին որոշման հայտարարության տեքստը:

Ընդունվել է որոշում՝ կողմ- 4, դեմ-0

Հանձնաժողովի անդամների ստորագրությունները՝

Հանձնաժողովի նախագահ՝	Արամ Խաչատրյան	.....
Հանձնաժողովի անդամներ՝	Կարապետ Հյուսիսյան	.....
	Հրաչյա Բաղդասարյան	.....
	Մովսես Ավագյան	.....
	Թադևոս Կիլիչյան	.....
Քարտուղար՝	Զանուշ Հայրապետյան	.....